


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Հրկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՍԵՐԻԱ
Տարեկան 2.60 ծրար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱԵԽԻԿ



Լ Բ Ա Գ Ի Բ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Վ Ա Ք Ա Վ Ա Ն

ԵՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄՆՆ ԶՈՐԵԴՇԱՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du journal

„Travounk“

VARNA (Bulg. ric)

Редакция

на вѣстникъ

„Травунк“

ВАРНА

Գրութիւնք եւ
չին տրութիւնք

ՄԵԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱՍԱՆԻ ԵՒ ՄԱԿԵՂՈՒՆՈՅ
Հ Ա Մ Ա Ր

Հայասէր Ֆրանսացիներու Գոմիթէն Հայկական և Մակեդոնական խնդրոց համար Միջազգային Համաժողովի մը հրաւիրած է քաղաքակիրթ աշխարհի շատ մը դիւանագէտները, գիտունները և գրագէտները։ Համաժողովը պիտի գումարուի հոկտեմբ. 25ին, Բարիզի մէջ։

Արդէն Համաժողովին իրենց համակրութիւնը յայտնած են շատ մը երեւելի անձնաւորութիւններ, և աշակցութիւն խոստացած են Անգլո-Հայկական ընկերութիւնը, որուն նախագահն է հռչակաւոր Սթէվընսըն, Պալքանեան Գոմիթէն, որուն նախագահն է Ռէյլըս Պոպս, նախկին նախարար և երեսփոխան և Խոսկոյ ու Պէլճիգայի Հայասէր գոմիթէնները։

Այս Համաժողովին նախաձեռնութիւնը ստանձնող Հայասէր Ֆրանսացիներու Գոմիթէն, որուն նախագահն է Ֆրանսիս տը Բրէսանտէ, իր հրաւիրագրով բացատրած է թէ այլ եւս ժամանակը հասած է որ Եւրոպան չը ձգէ Հայաստանի և Մակեդոնիոյ խնդիրները ուսումնասիրական քննարկելու, այլ փնտռէ աւելի ազդեցիկ ուրիշ դարմաններ Համաժողովին ծրագիրը ուժեղեցնելու համար։

- 1) Բացատրութիւնը կացութեան (Աւստրո-ուսական ծրագրին անյաջողութիւնը)
- 2) Ֆրանքո-Անգլո-խաղաղական գործունէութիւնը.
- 3) Հայաստանի և Մակեդոնիոյ խնդիրներուն սերտ կապակցութիւնը.
- 4) Դիւանագիտութիւնը և Արեւելեան խնդիրը.
- 5) Արեւելեան խնդրոյն անմիջական լուծման անհրաժեշտութիւնը.
- 6) Եւրոպայի հաւաքական եւ անշահախնդիր գործակցութիւնը.
- 7) Բացատրութիւն և խորհրդարանական

դակցութիւնը զանազան առաջարկութիւններու և լուծման եղանակներու.

8) Համաժողովին որոշումները և եզրակացութիւնները։
Հացկերպով մը պիտի դոյնուի Համաժողովը։

ՆՈՐ ՈՃԻՐ ՄԸ

Մինչ Հայ Յեղափոխական շարքերուն մէջ մտած եղբայրասպանութեան քստմալի դրութիւնը, Հայ ժողովուրդի միահամուռ լուրջին շնորհիւ, գերեզմանին յանձնած ըլլալ կը կարծէինք, որ Մեծի տալար լուրը մեզ կը հասնի Վերածնունդի շարժաթիւնը վերջին թիւին մէջ զետեղուած հետեւեալ տղերքով։

«Վերջին պահուս խմբագրութեան հասած կրկին հեռագիրներ կը հաղորդեն որ, եւրէի (6 սեպտ.) Այիճիմ ՆԱԶԱՐԻՔԻՅԻ վրայ սպանութեան փորձ մը կատարուած է։

«Վերջը ծանր է, բայց ոչ վրէժալի մահով։

«Այդ հրէշային արարքի ստորաբարձը հեղինակները հաստատեցին անոնք դատաստանին «յանձնելով» կը փութանք այս «առեւի մեր ջերմ համակրութիւնը յայտնել մեր թանկագին «ընկերին, որուն շնորհիւ յաջողեցին «պաքինման ի սրտէ կը ցանկան «իր բազմաթիւ համակրողները»։

Ազգային գործիչի մը վրայ կատարուած այս սպանութեան փորձը մեզ մեծ վիշտ կը պատճառէ, սա նկատուում մահաւանդութիւն, կրնայ այս դէպքը առիթ տալ հազիւ հանդարտել սկսող մտքերու նորանոր գրգռութեան, որուն անմիջական հետեւեալ կրնայ ըլլալ փոխադարձ սպանութեան շարքի մը վերսկսումը։

Մենք դատապարտելով կը դատապարտենք այս արարքը որ անհատի և ո՛ր խմբի կողմէ ալ որ գործուած ըլլայ, ցորչափ մեզ յայտնի չէ այս օրինակ որ ճիշդ մը արգարացնող պատճառը,

եթէ երբէք դա դառնութիւն կըրնայ ունենալ։

Այս նոր ոճի լուրը Վերածնունդի հաղորդած վերի ձեւին մէջ հարեւանցի կերպով կարգացող մը և Հին Հնչակեաններուն ներքին վեճերուն անտեղեակ մէկը պիտի փորձուի զայն վրէժխնդրական գործ մը նկատել Վերակազմեալներու կողմէ։ Մենք չենք երկարելու բնաւ որ Վերակազմեալ կառավարութիւնը կամ անոր սեւէ մէկ խմբակը անձնատուր ըլլայ Նազարէկեան մը սպաննելու սա օրերուն մէջ, ուր Հայ ժողովուրդին միահամուռ արտասանած դատաւճիռը իրենց ճակտին ընդունած են Հին Հնչակե կեդրոնի Սպանի Սրբաւանեանց սերագործները. ազգովին արտասանուած այդ դատաւճիռն վերջ եղբայրասպանութեան նոր փորձ մը ընել — ըլլայ իսկ վրէժխնդրական պիտի նշանակէր նոյն դատաւճիռն բաժին մուրալ. այս օրինակ յիմարութիւն մը երբէք չի սպասուիր Վերակազմեալներէ, որոնք Միսոյի և Զիթեանի դիակներուն իշխումը օրերուն մէջ իսկ իրենց պաշարներէն վերջին կը ցնէին և յայտարարել թէ «եղբայրասպանութեամբ չպիտի եղբայրանան Դիւաններուն հետ»։

«Վերածնունդի Նազարէկեան օռնան մը և Վերակազմեալներու հակառակորդ թերթ մը ըլլալով հանդերձ չի համարձակուիր ոճի մը ուրիշներու վերագրել և հեղինակները յայտնել, երկու հեռագիրներ ստանալէ յետոյ անոր պահած այդ լուրերուն մինչև իսկ կուգայ արթնցնել այն կասկածը թէ, մի գուցէ Նազարէկե սպաննելու փորձը Հինքեան կողմէ եղած ըլլայ, քանի որ արդէն իրենց մէջ Նազարէկի հետեւած նոր ուղղութեան — բանտարներու հետ գործակցել և այլն — հակառակողներ շատցած և վերջերս սպաննական դիրք մը ստացած էին։

Վերջուպէս սերագործը կամ սերագործները յայտնելու մասին Վերածնունդի իր լուրերով մը ժողովուրդը անել կացութեան

մը մէջ կը գնէ, որ կրնայ մտաքննութեամբ դրոշմուել մը նորանոր գոմիթէններու առաջ ընել։ Այս պարագան և մտքերուն ներքին ընդհանուր փափակ կացութիւնը Վերածնունդի խմբակը վերջին պարտէր ի նկատի առնելով, և ըստ այնմ հրապարակ նետել սերին հետ միասին սերագործներու ինչ գոյնի կամ խումբի պատկանելի։

Կը կրկնենք, մենք դատապարտելով կը դատապարտենք այդ նոր ոճին հեղինակները, անոնք ո՛ր խումբի և ո՛ր կառավարութեան որ ալ պատկանին։

ԲԱՆԱԲԱԿԱՆ

ՄԱԿԵՂՈՒՆՈՅ ԿԱՅՈՒԹԻՒՆՔ

Սեպտեմբ. 18 հոկտ.

Մանաթըրի նախագիւղ գրեթէ բոլորովին տեղակ եղած է 150 զիւղեր տարած են, որոնք միջին հաշուով 50 լիտր տուններէ կը բաղկանան և իւրաքանչիւր տուն հնգական անձ հաշուելով (անուտաղն) 36,500 լիտրի վերջին ծայր թշուառութեան մատնուած է։

Ամառը հունձքերը, կարելի է ըսել, կողոպտուած են զինուորներէն կամ ապստամբներէն, ընտանի կենդանիները ծախուած կամ կերուած են. ուստի երկրորդական ալիս սուս թիւը անկարելի եղած է։ Այս միջոցիս բոլոր տղերքերը մէջ տարող չքուերութիւնը շուտով սովի պիտի վերածուի։

Եւ ձմեռը կը մտնուայ։
Սեպտեմբ. նախագիւղ մէջ կացութիւնը նոյնպէս բոլորովին աղետալ է։ Անապահովութիւնը կը սիրէ Սթըն մայի բոլոր հովիտը, Թուրք գործերը անկարողութեան մէջ կը դանդաղան ապստամբ խումբերը հալածելու լուսնի մէջ, ուր անոնք կատաղանալին։ Զօրավար Եմէթ 700 հրացաններ ունի, և որոշած է, ամեն պարագայի մէջ, նեղել զօրքերը նոյնիսկ ձմեռուան եղանակին։

Բնականապէս այս նախագիւղ տեղակ եղած է. Թուրքիոյ մէջ հոգածութիւն բառը պարագայ խոսք է. բանակը սարքի մը ի վեր և երկրի մէջ կը գտնուի. բոլոր զիւղերը զօրքերու կողմէ հարստացուեցան։

Ինչ ընելու է Թուրքիան երբ ըստապուած է բոլոր ձմեռը վերջի տակ

պահել 280,000 մարդ որ ամսական 7 միլիոն ֆրանքի կը նստի իրեն :

Վաճառականական գործառնություններն ունենալով, Սէլանիկի հրապարակը անտեսական ողբալի վիճակի մը մէջ կը գտնուի : Ամէն մարդ իրաց այս կացութենէն կը վախճայ եւ Սէլանիկի վաճառատանց հետ յարաբերութիւն ունեցող վաճառականները անշուշտ մեծ փառանք պիտի կրին :

Մակեդոնական պատերազմները Բարիկի մէջ . — Տ. Տ. Կէօրիկի վ. Միւլիկի՝ որ Ներիին կազմակերպութեան արտադրանքն պատուիրակներն են, Լոնտոնէն Բարիկ հասնի երեքշաբթի իրիկուն : Մասալիք են քանի մը օր Բարիկ մնալ իտալիա եւ թերեւս վիւէննա երթալէ առաջ : Նպատակ ունին մաս մը դրամական օգնութիւն հաւաքել ի նպատակ այն հաղարար Մակեդոնացիներուն զորս ապստամբութիւնը անպատասպար ձգեց եւ աւերեց :

Լ. ԵՕՈՒՕԲԷՆ

ՇԱՐԺԻՆՔ

Վարդապետ եւ թաղական, քահանայ ու զպիւր միջնե ցեղոր միւր խղճին վրայ պիտի բռնանան, մինչեւ երբ ազգ արժանապատուութիւնը այդ պիտեաց ձեռքին մէջ ծաղր ու ծանակ պիտի դառնայ :

Ալ բա՛ւ է . շարժի՛նք, եւ ցոյց տանք թէ ժողովուրդը կոչուած ամբարձր, անուշ եւ անհեղինակ մարմին մը չէ՛ . իսկ դու վառնայաբնակ երիտասարդութիւն, դեռ պիտի շարունակե՞ս մնալ քո լճացեալ վիճակին մէջ, լուր անտարբեր հանդիսատեսն ըլլալ բոլոր ա՛յն անխառնութեանց որք յանուն ազգի եւ քու հաշտոյնի գործ կը դրուին . չե՞ս յիշեր դու, որ ազգերու շարքին եւ ժողովուրդեան ամեն խառնելի մէջ կոչուած եւ մղիչ ու շարժիչ ազգային ըլլալ, եւ մինչեւ իսկ հրաշքներ գործել :

Ծնողեցէ՛ք վառնացիներ, պարտաճանաչութեան ըրպէն այլ եւս հնչած է : Իրաւունքի եւ արդարութեան ասպարով վաճառաւորուած իբրեւ անյիւհեք զնոսր յառաջ նստուի՛նք մեր հարուածը հող չէ՛ թո՛ղ ըլլայ այն մի թիչ անողոք, բայց միայն թէ իրաւունքը յաղթանակէ : Դիմանալ ազգ. նուիրական սեղանին բոլորակը ողջակէզներ դառնալ, եւ նոյն իսկ կիթ հարկը պահանջէ զոհեր ալ ըլլալ : Ազգադուր թաղականութիւն մը՝ ունենալով իրեն լծակից եւ վաճան, վարդապետներ, անարժան քահանաներ եւ էնտէլիգենտ-խմբագիրներու ջոկատը, որ լուր փառասիրական տենչէն մղեալ, իրենց անհեռատես մի քայլովը իսկապէս ազգային շրջանակին պատկանող գործին մէջ, կառավարութեան քօնթոսը հրաւիրելով, պուլկարահայի ինքնուրոյնութեան մեծագոյն եւ ծանրագոյն հարուածը ապու ճամբան հարթեցին . ու դեռ հանդուրժել որ այդ պիտիք իւրեանց ազգավեհա պաշտօնին մէջ յարատեւեն, այդ կը ցոլացնէ մեր տկար կողմերէն ամենէն յոգին :

Զիմ ըսեր թէ խլէ՛, բայց յետո պահանջէ՛ ա՛յն իշխանութիւնը—կիթ է ընդդիմանայ իսկ նա տալու—զոր դու փառահայար քեզի հաւատարիմ կարծեցեալներուն ձեռքը, ա՛ռ ա՛յն ազգ. կնիքը անոնցմէ որով թաղականութիւնը քո մահալճիտը կնքեց : Զախճախէ՛ այն խաղաղ բազուկը, ի՛նչ փոթ թէ նա լինի վարդապետի մը, թաղականի եւ կամ պատր. փոխ. հօր, որ քու իրաւունքները կապտիւր չափ

կը խեղափել իւր շահատակութեանցը մէջ : Ծանթահարէ՛, կիթ է կրնաս, անարգ էութիւնը սեւ հոգիներուն, որոնց նշանաբանը ամենուրեք եւ միշտ եղած է, ճշմարտութիւնը ստնակոխելու անխառնութեան ջատագով հանդիսանալ : Ժողովուրդը եւ, ցոյց տուէր քո հեղինակութիւնը, դու որ պիտեա եւ կրնաս քեզ համար թաղականութիւն, հողաբարձութիւններ կերտել ու հաստատել . սքեմաւորներ զգեստաւորել, դու ես տէր, ուրեմն քեզ պէտք է հնազանդին այս բոլորը . վա՛րէ՛, քո անհղատաստ հարուածներուն տակ ամեն տեղիք, որք կ'անդօնեն քո մէջ ձայնին . արարիչ եւ եւ միանգամայն տալիք, գիտցի՛ր ուրեմն օգուտ քաղել քո կրկնակի յատկութիւններէն : Զօրութիւն մը եւս, ցո՛յց տուէր վերջապէս քո ոյժը :

ՎԱՆՆԱՅԻ

ՈՌԻՍՉՈՒԳԻ ԳՈՐԾԵՐ

— ԳԵՂՈՒՄ —

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

ՊԱՏԿԱՄԱՆՈՐ . — Սյո քաղաքը էն առաջ ընտրել է իր պատգամաւորը . հոս ալ ընտրութեան տուն հինիւր եւ նորերու կուտակցութիւնը զլուր է ցոյց տուեր, ու նորերը յաղթական շարքեր են : Իրապէս ընտրական պայքար չէ մղուել, նորերուն եռանդաւորութեան առջեւ, հ'ները ձեռնադաճ մնացել են . որպէս զի խնդիրն էր ծայր չտան : Բայց, պարզապէս որ ուղարկութիւնս գրաւեց . սա էր էր որ նորերուն մեծ մասը, զժող տեսայ իրենց պատգամաւորին, որ տեղւոյն թերթին մէջ ապալիւ՛ս—իրենց բառով— գաղափարներ սկսել է յայտնել իրեն յանձնուած պաշտօնին մասին : Ահա խոշոր գիծերուն մէջ պատգամաւորին յայտնած գաղափարները . — Առաջնորդական օրէնք չուր, որ ըրովհետեւ օրէնսդէս չունինք . ժողովներ չուր, որովհետեւ դրամ չուր : Առաջնորդ մը պէտք է մեզի ճիշդ այնպէս, ինչպէս Պոլսոյ եկեղեցիները քարոզչներ կուենան :

ԹԵՐԹ . — Իրաւունքի մէջ այս միջոցի թաղ. խորհրդոյ մօտաւոր ընտրութեանն առաջ միտքերը յուզող խնդիրը մը գտայ, թերթի հրատարակութեան խնդիր մը : Սյո մասին ալ, հանրութիւն երկու մասի բաժնուած գտայ . բայց ոչ հինիւր եւ նորերու մասը Սյո գործին չուր եղածը տարբեր գոյնով մասեր են . մին մեծ եւ միւսը պղտիկ . Երկու խումբին մէջ ալ տրեքացուներ, ուսուցիչներ, գրագիրներ, խառնութեաններ եւ վաճառականներ կան :

Խնդիրը սա պարագային վրան է, կուզուի այդ թերթին հրատարակութեան համար, բաժնետոմսական ընկերութիւն մը կազմել, բաժնիները պիտի ըլլան 150 հատ, հատը 20 ֆրանքնոց :

Սյո խնդիրը մշակող փոքր մասն է որ կըսէ .

— Արտադրանքի միւր բոլոր թերթերը, աւելի կամ նուազ կուտակցական թերթեր են, ամենուն մէջն ալ կոխէն ուրիշ բան մը կարգադրած չունինք, լուրջ թերթի մը պէտք ունենինք : Ահա այս թերթը, մեզ պիտի գոհացնէ, բայց այն ալ հարկ եղած դրամագլուխը չունի հրատարակութեան ապահովութեանը համար : Ուստի ասանկ օգնութիւն մը անհրաժեշտ է իրեն : Սակայն այս փոքրամասնութիւնն չի կրցի որոշ կարծիք մը կազմել օգնութեան բուն ձեւին համար, ուստի կը-

սեն ինծի թէ, 150 հատ 20 ֆրանքները իբր նուէր պիտի արուին խմբագրին, սմանք իբր փոխառութիւն եւ ուսմանք ալ, իբր շահաբաժին արտադրող դրամագլուխ մը : Բայց այս ձեւերէն որն ալ ըլլայ, եղածը օրինական վաւերացում չի պիտի ունենայ : Հիմա յայտնենք մեծամասնութեան կարծիքը :

— Մարդ մը, որ Պուլկարոյ մէջ գտնուող հայերէն, էն շատ պատմութիւն ունեցողն է, մանաւանդ դրամական խնդիրներու մէջ, օր մը քաղաքին եկաւ թերթի մը, ազատ համարձակութիւնով մը քանի մը բարեւելք անձնը ժողովուրդին շուրջ, որոնք մինչեւ վերջերս թերթը տարեցուցին, այսօր հանրային բան մը ընել կուզեն կը այդ թերթը, որպէս զի հին առեւտրի օրերը աչտեւ ընեն իրենց պահանջները : Ասոր համար ալ ամեն դասէ մէջն էր բարեմիտներ ժողուելով ասանկ խնդիր մը մէջտեղ նետեցին : Այդ օգնութիւնը, զոր քաղաքը ընել կը հրաւիրուի, որո՞ւ համար պիտի ըլլայ, ինչէն խնդրողին համար, մարդը ոչ միայն գործ մը առաջ տանելու համար հարկ եղած անցեալ գործունէութիւն մը չէ ցոյց տուած, այլ խմբագիր չէ, նախկին քօնթիօնի մը, ճէլէպ մը, վերջապէս արհեստին մարդը չէ :

Տեսէք, ինչ քաղաքին ինողը, Զահաղարին, Արփիտրին, Բաշալեանին, Զօրանտրին կամ ասոնց պէս խմբագրութիւն ընող մարդ մը ըլլալ, ասանկ օգնութեան մը համար խորհելինք : Ըսենք թէ մարդուն չէ որ օգնութիւնը պիտի ընենք այլ թերթին, ինչո՞ւ, որովհետեւ թերթին մէջ կոխ չիկայ եղեր : Կոխ չըլլալը, երբեք ի վեր թերթի մը առաւելութիւնը սկսած է կարծուիլ աշխարհին մէջ : Դայեցէք, կարգադրէ մէյմը թերթը, հո՞ր կեանք կայ : Ենթադրենք թէ գոյիլի բան մըն է ատիկայ, ասոր համար ալ բաժանորդ ըլլալինս չը բաւէր : Ասոյն աղջկանց գոյրոցնիս կը փի կոր, երբ ենք թերթ մը պահելու : Երաւի մեր խիլը չի հասնիր կոր այս գործին : Ոտքերնիս կօշիկ չունինք, երբ ենք գլխարկներուս վրայ փետուր մըն ալ անկելու . . .

Սյո երկու խումբին ալ զուգահեռներն, ինչ որ մինք կըրցենք եղբակացնիլ սա է թէ, քաղաքը դեռ Արիստոյ մարդեր ունի, հակառակ մեծամասնութեան մարդկանութիւնը Պարոնտրին օրէն ի վեր իւր ձեւերը փոխելուն, եւ աղջկանց գոյրոցնի չիւնութիւնը քաղաքին համար, հիմա աւելի կարեւոր է, քան իւր «օֆիսէլ» թերթը :

ԶԱՐԶԱՐԻԱՐ

ՇԱՅԻՆ ՀՈՐԱՎԱՐՏԱԿԸ

Դաւրէժի Դորճ շաբաթաթերթին մէջ հրատարակուած է Պարսից շահին հետեւեալ հրովարտալը, որուն մասին մենք գրած էինք եւ որով Հայոց կարոտնուի Պարսկաստանի մէջ գաղութներ բանալ, հրամայելով որ բոլոր կառավարական պաշտօնեաները անոնց աջակցին եւ օգնեն :

«Այն օրից որ Իրանի կայսրութիւնը մեր Օգոստոսարար անձնաւարութեան վիճակուեց, իբրեւ երախտագիտութիւն առ Աստաժային նախախնամութիւնը, մենք

տարածեցինք մեզ շնորհաւոր զորութեան ճառագայթները մեր կայսրութեան բոլոր բնակիչների վրայ, ինչ ազգի եւ ցեղի ու կրօնի պատկանէին նրանք եւ ամենքին միեւնոյն հայրենիքի սրգիներ հաւարելով ամեն առիթով եւ ամեն պարագայում նրանց բարօրութեան համար ջանք չը խնայեցինք : Յայտ ունինք, որ ամենակարող Աստուծոյ օգնութեամբ աւելի քան ցարդ վայելելով երկնային օժանդակութեան շնորհը՝ մեր այս սուրբ պարտականութեան աւելի աջագործութիւն գտնենք :

«Եւ արդ, մի բան, որ մեր սրտի բարի իղձերի հետ կատարելապէս համապատասխան է, այն է, որ մեր կայսրութեան Հայ ազգաբնակչութիւնը, որ հին ժամանակներից ի վեր ապաստանած է առ ռոս Պարսից Արքայական Գահին, եւ որը մշտական հաւատարիմ հպատակութեան եւ երկրասիրութեան ապացոյցներ է տուել, այժմ մտադիր է իր գաղութների թիւն աւելցնել թէ՛ Իրանում, Դաւրէժում եւ Պարսկաստանի այլ գաւառներում, հաստատելով մի քանի կեդրոնական նշանաւոր գաղութներ, եւ այս առիթով մեր Օգոստոսիա վեհափառութիւնից արտօնութիւն է խնդրել այդ գաղութների բացման համար :

«Հայերի այդ նպատակը մեր սրտաբուխ փափագների հետ համաձայն գտնելով, եւ նկատելով որ այդ նպատակը մեր հպատակների առաջադիմութեան պատճառ պիտի դառնայ կրթութեան արհեստների եւ երկրագործութեան ասպարէզներում, եւ վաճառականութեան զարգացման միջոց պիտի հանդիսանայ, սոյն հըր Արքայական ֆերմանով շնորհում ենք նրանց արտօնութիւն Պարսկաստանի Հայ գաղութներ բացման համար, եւ այդ գաղութները մեր մասնաւոր հոգաւորութեան եւ պաշտպանութեան տակ առնելով հրամայում ենք որ այն գումարները, որոնք այդ ձեռնարկութեան համար յատկացուելու են, գործադրուին նոյն գործի ձեռնարկողների եւ հոգաբարձուների յօրինելիք կանոնադրութեան համեմատ որոշուած ծախսերի համար : Ընդհանրապէս բոլոր հաստատուած գաղութները մեր Արքայական Անձնաւարութեան պաշտպանութեան տակ գտնելով, հրամայում ենք որ մեր բոլոր պաշտօնեաները ամեն տեսակ աջակցութիւն եւ օգնութիւն նուիրեն նոյն նուիրական գործի աջագործեան համար : Տրուած է Թէ՛ Չէ՛ր աւսին 1318 թուին» :

ԹԱՏԵՐԱՍԻՐԱՑ

ՆԱՏԵՐԱՍԻՐԱՑ. Հայ գերս. խմբի մասին թատերական կողմանէ լուրջ դիտողութիւններ տեղի կունենան արուած ներկայացումներուն շինիչ եւ հրահանգիչ չըլլալուն համար, եւ թատերական կողմէրը տաղտկալի եւ անպատասխան ըլլալով, հանրութեան արտին մէջ կը փթագնեն եւ նոյն իսկ կը մահացնեն կըսուի դէպի թատերաբէմն սէրն եւ համակրանքը: Այս է դժգոհ տարրին առարկութիւնները, եւ ինչո՞ւ ՆԱՏԵՐԱՍԻՐԱՑ խումբը իր սկզբունքն չկողմնանիմատ ներկայացումներու յարած է: Ասոր պատճառը չափ պարզ է. ՆԱՏԵՐԱՍԻՐԱՑ կազմակերպութեան օրէն սկսեալ հրահանգիչ եւ բարձր ներկայացումներ սարքելու համար մեծամեծ զոհողութիւններ ընելով, ներկայացուց Շէքսպիրի Համլէթը, Մակբէթը, Օթելլոն եւ ուրիշ հերոսական բարձր թատերականներ, հուսկ ուրեմն Սօն-թէ-Վերիթի հինգ իրերէն մէկը, որուն զգալիորաբար երկրորդ երեկոյթը միայն կրցաւ ներկայացնել հօթանաւուն լէֆի հասոյթով մը: Թատրոնը ժողովրդեան ձեռնտուութեամբը եւ քաջութեամբը կրնայ յառաջանալ, Թիֆլիզի, Պագուսի մէջ ամեն տարի թատերական խումբերու ձեռնտուութիւններ եւ նուիրատուութիւններ կը ըլլան, եւ անոնց թեւ ու թիկունք հանդիսանալով տեսակ մը բնորոշ յառաջադիմութեան սատարողը աշխուժութիւնը եւ վերահանգութիւնը կունենան: Խումբն ալ պատրաստ է ժողովրդեան փափաքանց եւ ճաշակին համեմատ համով հոսով բեմ ներկայանալ, եթէ թատերաւոր ժողովուրդն ալ իւր քաջախելութիւն խմբին չըլլանայ. ոչ թէ մի քիչ զոհողութիւն եւ բարեացակամ ոգի կը պակսի խումբին, այլ ամենամեծ դժուարութեանց դէմ ալ մաքառելով կը փափաքի զոհանքն թատերաւոր հասարակութիւնը:

Արդ, դերս. խումբն հրահանգիչ ներկայացումներ սարքելու համար որուն ինքն ալ այնչափ փափաքող է, կարօտ է առաջնակարգ դերասանութիւն մը, եւ

զոհէ իւր այդ արականը լրացնելու համար, թատերասիրաց աջակցութեան պէտք ունի, եւ արդ. Վառնայի թատերասէր գասակարը ինչո՞ւ չփութացնէ, ինչպէս կողմնակի եւ ամերիկայի մէջ՝ պաշտպանութիւնը Հայ գերս. խմբի մը: Եթէ չըլլացողի այդ աշակերտութիւնը խումբը սիրով յանձն պիտի առնէ իր բեմական կողմին համապատասխան շինիչ եւ հրահանգիչ թատերականներով ներկայանալ թատերասէրներուն:

Այս իսկ նպատակաւ ՆԱՏԵՐԱՍԻՐԱՑ գերս. խումբը քանի ներկայացմանց համար բաժանորդագրութիւն մը կը բանայ, որուն հասոյթովը Պոլսէն առաջնակարգ դերասանութիւն մը ընդլիմտագրած է, եթէ թատերասէր ժողովուրդը այս ձեռնարկութեան բարեհաճի սատարել. ուստի ժողովուրդին կողմէ մի քիչ զոհողութիւն ու բարեացակամ ոգի, եւ ահա ամեն ինչ կը դիւրանայ:

S. ԳԱԼԵԱՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԱՏՐՊԱՍԿԱՆԻ (Պարսկաստան) Առաջնորդ Տ. Եղիշէ Մ. Վ. Մուրաթեան եւ տեղական վարչութեան անդամները եւ երեսնակները սկսաւ 14 թուականը ընդարձակ հեռագրի մը ուղղել են Բեթլեհեմի պաշտպանութիւն խմբին խնդրելով Մայր Աթոռին իրաւունքներուն համար, եւ ջատագովելով Հայ կղերին ուղիղ ընթացքը՝ կալուածոց գրաւման դէմ:

ՊԱՍՏՈՅ օտար թերթերը երեսնադէմի վանքին հայիւններուն մասին սապէս կը գրեն. «Երեսնադէմի հայոց վանքին իրաւունք տեսաւ Ղեզնդ Վ. Մաքսուտեանի գեղծութիւններն հետեւանք, վանքը 30,000 ոսկի պարտքի մը տակ մնացած է, որուն համար քննութիւն մը կատարելու պաշտօնով Պարսկաստանի գերանապետ Թէլեան էֆ. Երեսնադէմ կը խնայէ»:

Տ. Թէլեանի այս ուղեւորութեան համար իստան Ժողովը 50 ոսկի ծախք որոշած է:

ԱՌԱՋԱՌՈՐԴԱԿԱՆ վիճակներու բաժանման համար իստան Ժողովոյ ընդունած նոր կանոնագիրը մինչեւ որ Երեսնադէմի վանքին վերաբերուի ու վաւերացուի առեւտրային գործարարութեան պիտի դրուի: Այս առեւտրային հակառակ ծագելը կուղղէ իւրաքանչիւր առաջնորդական վիճակի սահմանները կառավարական բաժանմանց հետեւողութեամբ. բայց կրնայ լինի, Աղթարայի եւ Երեսնադէմի Աթոռներուն սահմանները իրենց այժմեան կացութեան մէջ ամփոփու պիտի պահուին: Միաբանութիւն չունցող վանքի իրենց դռնուած վիճակին առաջնորդարանին մատակարարութեան պիտի ենթարկուին. եւ եթէ միաբանութիւն ունին նոյն վիճակին Առաջնորդ անունը վաւերացուի անհնգութիւն:

Փոքր առաջնորդութիւնները պիտի միացուին մեծակալ առաջնորդութեան հետ իբր Միացեալ Վիճակ. բայց երկուքն ալ իրենց առանձինն Գաւառ, Կրօն, եւ Գաւառական Ժողովները պիտի ունենան. միայն առաջնորդը միեւնոյն անձը պիտի ըլլայ:

Այս նոր կարգադրութեան համեմատ Աղթարեան պոլսոյ եւ Ռոստոմիոյ վիճակները միացեալ պիտի ըլլան: Չմիեւնոյն վիճակին պիտի կցուի Արշիպիսկոպոսի իննս. Գաղտնի վիճակը կը պաշտօնակէր այդ կուսակալութեանց զատ Գոնիայի եւ Գաթիճի մոլոնի գրեթէ ամբողջ կուսակալութիւնները. բայց այս անգամ Գոնիա եւ Գաթիճի մոլոնի զատ առաջնորդութիւններ պիտի կաղմեն, եւ առ այժմ Պատր. Գոնիայի ուղեւորութիւնները պիտի բաւականան. Կեւսարիոյ առաջնորդութիւնը միայն Կրքիճի վիճակին պիտի թողու:

Կը խոստանանք մեր յառաջիկայ թիւով համառօտ տեղեկութիւններ տալ միւս վիճակներու համար ալ, որոնք խոշոր փոփոխութիւններու պիտի ենթարկուին:

Վ Ի Պ Ա Կ

Մեր նախորդ թիւով հրատարակուած ՀԱՅԵՐԸ ԵՒ ՄԱԿԵՒՈՆԱՅԵՐԸ յօդուածին մէջ սխալ մը սպրդած էր. առաջին երեսի առաջին սիւնակի չորրորդ տողին մէջ «նախարարները» պէտք է կարդալ «նախորդները»:

ԳԱՅԱՏՈՒԹԻՒՆ ԵՐ

—*—

Վերջին օրերս Ռուսիոյ մեր բաժանորդներէ մէկ քանին կը գանգատին թէ իրենց թերթերը ուշ կը հանին: Այս առթիւ հրապարակաւ բացատրութիւն մը տալ աւելորդ չենք գտնար: Իրաւունք չորեքշաբթի եւ շաբաթ օրեր կ'էսօրէն յետոյ մամուլը յանձնուի, որպէս զի կարելի ըլլայ նոյն օրուան հեռագրին եւ սուրհանգակէն նորագոյն լուրեր քաղել. այսու հանգեք նոյն օրը. մինչեւ իրիկուան ժամը 5ը, թերթերը անպատճառ նամակատան կը յանձնուին, բայց հետեւեալ առաւօտեան կառավարութիւն միայն ճամբոյ կըլնեն. հետեւաբար չորեքշաբթի օրուան թերթը հինգշաբթի իրիկուան Ռուսիոյ հասած կըլլայ. ցրտէլը թերեւս ուրբաթ օրը զանաք յանձնէ հանգէներուն: Մեր այս բացատրութեամբ կը պարզուի թէ թերթերը մեր կողմէ չէ. միեւնոյն ասան կը յայտարարենք թէ մենք երբեք ուրիշ թերթերու ըրածին նման չենք կարող չուկայական հաշուով թերթը որոշեալ օրէն օր մը առաջ ուրպէս եւ հետեւալ օրուան թուականը գրել. նոյն իսկ չենք ուզեր թերթին տպագրուած օրուան վերջին լուրերը առանց անհետ զայն մամուլը յանձնել. ահա թէ ինչու համար մեր թերթը օր մը վերջ կը հասնի:

Բայց միեւնոյն ասան հաշուէ դուրս յապաղումներու մասին՝ միայն թղթատան պաշտօնէութիւնը պատասխանատու ըլլալով, առջի օր դիմեցինք եւ բողոքեցինք Տիֆլիզի մասին, որ խոստացաւ մեզ ասկէ վերջ չը յապաղեցնել ըսաւ:

ՄԱՍՆԱԿՈՐ ԳԱՅԵՐ

—*—

Հայ ուսուցիչ մը պատրաստ է ըստանձնել մասնաւոր դասեր Հայերէնի եւ Ֆրանսերէնի: Փափաքողներուն կարող է աւանդել նաեւ Իտալերէն եւ Ռուսերէն:

Դիմել Իրաւունքի խմբագրատունը:

ԱՆԳՈՒՆԳԸ...

(ԻՐԱԿԱՆ ԿԵՆՔԻ ՄԱՍԻՆ)

— Ի՞նչ ըսեմ... միայն միջոց մը կայ եւ անկէ զատ ուրիշ ճամբայ չունենք:

— Ի՞նչ միջոց:

— Այս պատանին անմիջապէս անյայտ ընենք:

— Ի՞նչպէս... Բացառանչեց Մաթոս Ախպար՝ սրտէն վերաբերուած առիւծի մը նայուածքը նետելով կնոջ վրայ:

— Ձը հասկցո՞ւք, ըսածս:

— Ամենաւին:

— Կը ստե՞ս... ես աղէկ գիտեմ որ ըսածս հասկցար ու հիմալ ալ չը հասկնալ կը ձեռնացունես: Եւ ի՞նչ կայ չը հասկնալու. կըսեմ թէ մեր երջանակութիւնը չը վրդովելու համար այս պատանին պէտք է մէջ տեղէն վերցուի... ինչ կ'ըսեմ որ յաջողինք: Այսչափ:

— Ի՞նչ կուզես, Սթեֆանքա՛, գաւկիս արիւնը մանեմ:

— Հապա ի՞նչ կուզես, իմ ու երկու լպղտիկ գաւկիսներուդ արիւնը պիտի մանես...:

Ինքզ Մաթոս Ախպար ամբողջ մարմնով սարսափ Սթեֆանքային երեսն տնայե՛ս մը նայեցաւ, ինչպէս ոճրագործ մը կը նայի իր մահուան վճիռն արձակող դատաւորին երեսը:

— Ո՛հ, Աստուած իմ, յարեց նենգաւոր կ'ընէ՛ գրեթէ ճշդուած ճայնով մը, ինչո՞ւ խորուցեցայ... ի՞նչու ճակատագիրս քեզի պէս թոյլ ու արկածալից

մարդու մը կապելի... Ի՞նչու հանգիստ ու խաղաղիկ կեանքս վրդովել տուի... Ի՞նչու ձեռքով իմ ամբողջ թշուառութիւնս պատրասեցի: Ի՞նչ էք որ կը պակսէր ինձի...:

Ու սկսաւ լալ...:

— Ի՞նչու կուզես, Սթեֆանքա՛, ընդհանրեց Մաթոս Ախպար:

— Ի՞նչպէս չի՛ լաւ... դուն խոստումիդ տէրը չես, միմիջեց Սթեֆանքա:

— Տէր Աստուած... միթէ՞ խոստացայ քեզի գաւկիս արիւնը մանելու:

— Յիշէ՛... չըսե՛ր թէ «անոնք թուրքին են»:

— Ըսի:

— Ասով ըսել չուզեցի՛ր թէ անոնք իմ արիւնս ըլլայէ՛ դադրած են:

Մաթոս Ախպար նորէն լռեց: Հոգեկան անհուն ցաւ մը պատկերացաւ իր մեռելի գոյն առած կիրպարանքին վրայ:

— Ի՞նչու չես պատասխաներ, գոչեց Սթեֆանքա:

— Աղէ՛կ... ի՞նչպէս կրնամ անյայտ ընել, դողողաց թշուառ Հայաստանցին:

— Պա՛հ, չափ դիւրին է... այսօր բնա՛ւ դուրս չենք հաներ... քեզիք չուն մը կը դնենք վիզն ու քանի մը վարկեմանէն գործը կը վերջացունենք... յետոյ պարտեցինք մէկ անկիւնը կը թաղենք: Ի՞նչ կայ վարանելու... հաշուէ թէ թուրքին ձեռքով եղած է տառնիկ բան մը...:

Մաթոս Ախպար գրեթէ չէր հասկնար Սթեֆանքային ըսածները. միայն թէ ապուշի մը պէս կը նայէր: Ա՛լ ինքն իր տէրը չէր... Ինքն իր զգալուններու մէջ չէր գտնուեր... մէկ խօսքով ինքն

իր էութենէն ելած էր:

— Կըլլայ մի... բացառանչեց ճիւղող կինը:

— Կըլլայ... թղթովեց Մաթոս Ախպար, որուն ձայնը միմիայն արձագանք մըն էր:

Ան ասան չարգի Սթեֆանքա ոտքի ելաւ ու ըսաւ.

— Երթա՛նք տունը...:

Ու երկուքն ալ պարտեցին դէպի երկու յարկի վրայ կառուցուած տունը յառաջացան:

Պատանին միւս-միւսակ հեւրանցինք մէջ. կը սպասէր:

Երբ Սթեֆանքա դուրս բացաւ ու ներս մտաւ, Մաթոս Ախպար չը կցաւ մէկէն իմէկ անոր հետեւիլ: Նախ ապուշի մը պէս կեցաւ, չորաքին նայեցաւ, զողջաց ու սեմէն ներս քայլ մը անաւ. յետոյ մօտեցաւ Սթեֆանքային որ բազմոցին վրայ կը նստէր:

Կը ինքզեմ, բոսա պատանին, հրաման տուէք որ երթամ:

— Ո՛ւր պիտի երթաս... կեցի՛ր... հալո՛ղ այս գիշերը կուգայ մեզի, թղթովեց Մաթոս Ախպար:

— Հո՞ս կը պատկի:

— Հապա՛:

— Աղէ՛կ... անանկ էնէ կը կենամ:

Ու կամայ կամայ օրը կը մթննար:

(Շարունակելի)

